

ՄԱԹԵՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՍՏԵՂ. «ՆԱՄԱԿԱՆԻ»*

Սփյուռքյան գրականության ինքնատիպ դեմքերից է Համաստեղը (Համբարձում Կելենյան), որի անունը 1920-ական թվականներից հայտնվել էր «Փյունիկ», «Հայրենիք» և այլ պարբերականների էջերում: Իր ստեղծագործություններով Համաստեղը դարձավ հայ դասական գրական ավանդների յուրօրինակ շարունակողը:

Համաստեղին ծանաչում է բերում 1924թ. լույս տեսած նրա անդրանիկ ժողովածուն՝ «Գյուղը», որին էլ հաջորդում է «Անձրեկը» (1929, Փարիզ): Համաստեղի համար առանձնապես բեղմնավոր եղան 1950-ական թվականները, երբ տարբեր գաղթօջախներում սկսեցին տպագրվել նրա ստեղծագործությունները («Սպիտակ ծիաւոր»՝ Կալիֆոռնիա, 1952, «Քաջն Նազար եւ 13 պատմուածքներ»՝ Կահիրե, 1955, «Աղօթարան»՝ Բեյրութ, 1957, «Այնտոմար»՝ Կահիրե, 1960, «Առաջին սեր»՝ Բեյրութ, 1966):

Այսօր արդեն ընթերցողների ուշադրությանն է ներկայացված Համաստեղի նամականին (կազմող՝ Մարգարիտ Խաչատրյան)՝ ծավալուն առաջաբանով, որտեղ համառոտ, բայց գրեթե ամբողջական կերպով ներկայացվում է Համաստեղի անցած ստեղծագործական ուղին, խոսվում է գրական առնչությունների մասին, տեղեկություններ են հաղորդվում այն մարդկանց մասին, ում հետ նամակագրական կապի մեջ է եղել Համաստեղը:

Թեև նամականու ժանրը գրականության մեջ համարվում է երկրորդական, սակայն այն նպաստում է տվյալ հեղինակի ժառանգության բնութայնը: Այս նամականին ևս լույս է սփռում բազմաթիվ խնդիրների պարզաբանման վրա: Մ. Խաչատրյանը կարողացել է ի մի բերել Համաստեղի, ինչպես նաև նրան ուղղված պատասխան նամակները (թեպետ ոչ բոլորը), որոնք թերևս հնարավորություն են տալիս բացահայտել գրողի ներաշխարհը, նրա մտահոգությունների, աշխարհայացքի, գեղագիտության ըմբռնումները, նրա մտորումները բազմաթիվ այլ հարցերի շուրջ:

Նամակագիրներից յուրաքանչյուրի հետ (իսկ նրանք 18 են՝ Ս. Վրացյան, Ն. Աղբալյան, Ռ. Դարբինյան, Գ. Մահարի, Գր. Շահինյան, Վ. Հայկ, Ա. Հայկազ և այլք) Համաստեղը շոշափում է առանձին խնդիրներ, ինչը պայմանավորված է նրանցից յուրաքանչյուրի գործունեության ոլորտով, ինչպես նաև մտերմության աստիճանով և հետաքրքրությունների շրջանակով:

Առավել տևական է Համաստեղի և Հակոբ Խաչմանյանի, ապա նաև Սիմոն Վրացյանի նամակագրությունը: Նամակագիրներից ոմանց հետ Համաստեղի նամակագրությունը զուտ տեղեկատվական բնույթ է կրում (Բերսաբե Գրիգորյան):

Համաստեղին իր նամակներում հատուկ ուշադրությամբ անդրադառնում է սփյուռ-

*Համաստեղ նամականի (կազմող՝ Մ. Խաչատրյան), Երևան, Սուղհի հրատարակչություն, 2003:

քի օջախներում կրթական գործի կազմակերպման, ապա Հայաստանի և գաղութների սերունդների ֆիզիկական ու բարոյական այլասերմանն առնչվող խնդիրներին:

Գրողին մտահոգում էին հայ գրականության զարգացման, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման անհրաժեշտության, գրական հին և նոր սերունդների փոխհարաբերության, ինչպես նաև հայ ժողովրդի հոգեկան կուրուստներին ու դրանց դիմակայմանը վերաբերող հարցերը: Համաստեղի նամակները գաղափար են տալիս նաև հեղինակի մի շարք գործերի ստեղծագործական պատմության, ինչպես նաև այդ ստեղծագործություններին գրաքննադատության կողմից տրված առաջին արժագանքների մասին:

Համաստեղը չէր կարող անտարբեր մնալ սփյուռքի լինելության առջև ծառացած խնդիրների նկատմամբ: Գրողը համոզված է, որ «գրականութիւնն է, որ նաեւ պիտի պահէ Հայ սփիւռքը» (234) և որ «հայ գրողն ալ կարեւոր դեր ունին կատարելիք հայ ցեղի գոյատեւման մէջ» (257): Սփյուռքահայ գրողի համար առաջնալին էր նաև «հացի խնդիրը», թեև, ի տարբերություն այլոց Համաստեղը ստիպված չէր իր գրականության միջոցով վաստակել իր հացը և հետևաբար գտնուիմ էր, որ գրականութիւնը ապրուստի միջոց չի կարող դառնալ. «Ինչ կարծէ մի քանի տաւելը առնել գրական կտորի մը համար երբ իմ հացը գրական քրտինքիս հետ չեմ կապած» (60) և ապա «որքան դժուար է Ամերիկայի մէջ տրամադրութիւն ստեղծել, բանուորութիւն ու գրականութիւն իրարու հետ հաշտեցնել» (57): Ամերիկյան միջավայրը, որտեղ «առողջ հունդն անգամ տկար հողին մէջ կընկճուի», որքան էլ անբարենպաստ էր մշակույթի զարգացման համար, այնուամենայնիվ պետք էր ստեղծագործել. «Գրական աշխատանք անելու միայն մէկ «պայման» եւ մէկ «տրամադրութիւն»... Այդ՝ որպէս հայ զգալ, շնչել, ապրիլ եւ մտածելն է» (96): Նման պայմաններում Համաստեղի համար իր իսկ ստեղծագործությունները դառնում են միակ իրականությունը՝ անփրական հայրենի եզերքի դիմաց:

Համաստեղը 1927 թվականից սկսած շարունակ երազում էր Հայաստանում լինելու մասին («կայ ու չկայ», հեքեաթ մը»), սակայն նրա այդ երազանքը այդպես էլ իրականություն չդարձավ: Միաժամանակ Համաստեղը գիտեր, որ «Հայաստանի դռներն ու պատուհանները գոց են մեզի (իմա՝ սփյուռքահայերի) եւ մեր (իմա՝ սփյուռքի) գրականութեան համար» (79): Հայաստանի հետ նրան կապող օղակը Ավ. Իսահակյանն էր, ապա նաև Գուրգեն Մահարին, Կարապետ Սիտալը: Համաստեղը քաջածանոթ է եղել ժամանակի ոչ միայն սփյուռքահայ գրականությանը, այլև խորհրդահայ գրականությանը (Բակունց, Զարեմց, Պ. Սևակ, Զ. Քոչար և ուրիշներ):

Համաստեղը, անկախ անձնական հարաբերություններից, առարկայական քննադատության անհրաժեշտությունն է ընդգծում. նա քննադատաբար է մոտենում նաև իր ստեղծագործություններին. «Իմ կտորներուն հանդէպ ալ նոյնն եմ, աւելի շատ իմ գրածներու տկարութիւնները կզգամ քան թէ յաջողութիւնները» (81): Նա գտնում էր, որ եթե տկար է գրողը, ուրեմն տկար է նրա մեջ նաև քննադատը: Գր. Շահինյանին ուղղված նամակներից մեկում նա քննադատության է ենթարկում վերջինիս աշխատանքը՝ «Համաստեղ» խորագրով, որտեղ Շահին-

յանը սուր քննադատության է ենթարկել «Սպիտակ ծիավորը» վեպը: Բայց Համաստեղը միաժամանակ գրում է, որ «ոեւ մէկը ազատ է իր տպաւորութիւններն ըսելու ոեւ գրական աշխատանքներուն մասին» (282), և գրաքննադատութիւնը, ինչպես որ «Ծշմարիտ գրականութիւնը նախ անկեղծութիւն կը պահանջէ» (258): Գրաքննադատության հարցում նա նաև կոչ է անում զերծ մնալ կուսակցական դիրքորոշումներից: Կուսակցական պատկանելիությունը խանգարում էր նաև Համաստեղին ոչ միայն Հայաստան գալու հարցում, այլ նույնիսկ Հայաստանում տպագրվելուն, հակառակ այն համաձայնագրին, որ վերջինս «կուսակցական կիրք ունեցած չէ»: «Մեղք...Եթէ դաշնակցական չլլայիք այժմ ձեր գործերը կիրատարակէին Հայաստանի մէջ» (240): Այնինչ Համաստեղի համար, ինչպես խոստովանում է ինքը, զեղարվեստական պատկերման առարկա էր միայն հայ ժողովուրդը. «Ինչ որ լաւ բան ըրած եմ, հայ ժողովուրդին կը պարտիմ: Թերութիւններս իմս են», - գրում է Մահարուն ուղղված մամակներից մեկում (241): Հայրենիքի հանդեպ խորին կարոտով են պարուրված նրա մամակները. «Մենք այստեղ փակուած մեր հոգիներուն մէջ, քանդակ առ քանդակ կը կերտենք մեր երազներուն տաճարը, մեր պապերու ճարտարապետութիւնով: Մենք կերագենք, իսկ դուք կապրիք» (228): Խորհրդային Հայաստանում ամեն պարագայում քննադատաբար էին վերաբերում սփյուռքահայ գրականության նկատմամբ, արհեստական խոչընդոտներ ստեղծում Սփյուռքի և մանավանդ ՀՀ-ի համար, քանի որ այստեղ առաջնային էր միայն «նարեկական փառաբանութիւն ընել բռնակալի եւ դաշնակցութեան հայիոյել» (239): Այդ քննադատության թիրախ է եղել Համաստեղը. «Եթէ պատահի, որ իմ անունը տան մամուլին մէջ, անմպաստ բան մը ըսելու համար կուտան» (227): Վերջինս իր հերթին քննադատության է ենթարկում սովետահայ գրողներին, որոնք ազատ չեն ստեղծագործելու տեսակետից և թողած իրականությունը՝ «սկսած են պատմական վէպեր տալ» (76): Համաստեղի ստեղծագործությունները ինչպես, օրինակ, «Այծետոմարը», զերծ չեն մնացել նաև կրոնական գրաքննությունից (Մխիթարյանների մասին է խոսքը):

Իհարկէ կուսակցական տարածայնությունները չեն խանգարում Համաստեղին մտերիմ լինել Կարապետ Սիտալի հետ, որը պրոլետական գրականության հետևորդն էր, արժևորել նրա ստեղծագործությունները: Սիտալին հասցեագրված մամակներից մեկում Համաստեղը բարձր է գնահատում հայ ժողովրդի պայքարն ու ինքնության պահպանման ճիգը, որը, անշուշտ, «Քրեմլենին չի գար» (300):

Համաստեղի համար սփյուռքային մռայլ իրականության մեջ գնահատանքի յուրաքանչյուր խոսք ոգևորիչ է, հուսադրող, և ինքն էլ չի ծուլանում իր գնահատականը տալ մյուս գրողներին:

Համաստեղի համար կարևորվում էր հայկականության պահպանումը օտար եզրերում. այդ է պատճառը, որ նա թե՛ իր պատմվածքներում (օրինակ՝ «Երանոս աղբար») և թե՛ իր մամակներում հաճախ է բարձրացնում հին և նորի պայքարի հավերժական վեճը: Հնարավոր չէ հրաժարվել հինից, ավանդակահից, ինչպես նաև անցյալից: Բնականաբար նրան չի հուսադրում գրական նոր սերունդը, որը «հայ

գրականության մեջ նորությամբ մտցնելու ստորադասական ճիգը» (76) ունի սոսկ և, ինչպես նկատում է Համաստեղը, աստիճանաբար աճում է «իրենք զիրենք աշխարհի կենտրոն դարձնելու հիւանդութիւնը» (77), որն, ինչ խոսք, ազգային հիւանդության է վերածվում:

Գրողը ծառայում է հատկապես «գյուղագիր» որակման դեմ, որը նոր սերունդի նորամուծություններից է: Համաստեղը փորձում է հակառակվել. գրում է. «Այդ գրականութիւնն է (խոսքն այսպես կոչված «գյուղագրության» մասին է), որ իր հատուկ լեզուով ունի ուժ ու նկարագիր» (76):

Անշուշտ պետք է նշել, որ այս աշխատանքն իսկապես արժեքավոր է: Մ. Խաչատրյանին հաջողվել է մեկ հատորի մեջ համախմբել Համաստեղի մամակները: Գիրքն, ըստ ամենայնի, տքնաջան աշխատանքի արդյունք է: Չնայած այս ամենին՝ գրքում տեղ են գտել որոշ ուղղագրական անճշտություններ, որոնք հավանաբար կամ տպագրական վրիպակներ են, կամ էլ հեղինակի անուշադրության արդյունք: Որոշ անհամապատասխանություններ կան ծանոթագրություններում (օրինակ՝ փոխարեն 40-րդ մամակի I ծանոթագրություն գրված է 39-րդ (տե՛ս 7. Ավագյանին ուղղված 56-րդ մամակը) կամ Բ. Նուրիկյանին հասցեագրված 5-րդ մամակի ծանոթագրության մեջ կարդում ենք. «Տե՛ս Համաստեղի՝ 7. Ավագյանին հասցեագրված 56-րդ մամակի ծանոթագրությունը», իսկ թե որը, պարզ չէ և այլն), իսկ որոշ հատվածներ էլ ուղղակի կարոտ են ծանոթագրման:

Ծավալուն առաջաբան, որտեղ սակայն խոսք չի ասվում Համաստեղի ստեղծագործությունների պոետիկայի խնդիրների, առանձնահատկությունների մասին, և պետք է նշել, որ նրա գրականությունը չի կարևորվում միայն «թեմատիկ և ժանրային բազմազանությամբ»:

Սրանք թերություններ են, որոնք իհարկե ստվեր չեն գցում գրքի վրա: